ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

ՀՀ մարզպետներին

Երևանի քաղաքապետ Տ. Ավինյանին

(առաջարկությամբ)

Խնդրում եմ քննարկել և ներկայացնել տեղեկատվություն կից գրության յուրաքանչյուր հարցի վերաբերյալ:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Ժամկետ՝ 13.05.2025թ.:

Invalid signature

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274

Դ. Խուդաթյան

№ ԴԽ/15.2/15216-2025 **“___“ _____2025թ.**

Կատարող՝ Սիրանուշ Բադիշյան
Հեռ.՝ 010515124

h.1497131
06-05-2025թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն*

Դիմող՝ *ՄԽԻԹԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ*
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Հասցե՝ *ԱՐԱԳԱԾՈՏՆ, 0501, ԹԱԼԻՆ, ԽԱՆՋՅԱՆ Փ., 21, 17*
mkhitargasparyan98@gmail.com : 37498555490

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հարգելի՛ պարոն Խուդաթյան,
Հայտնում եմ Ձեզ, որ իմ «ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման հիմնախնդիրները եւ բարելավման ուղիները» թեմայով ատենախոսության շրջանակում նախատեսվում է իրականացնել ամբողջական եւ համակողմանի վերլուծություն, որի համար անհրաժեշտ են որոշակի տեղեկություններ (ստորեւ ներկայացվում են): Միաժամանակ ցանկանում եմ նշել, որ **ատենախոսության համար կարեւոր է** համապատասխան **տեղեկությունների հավաքագրման մասին տեղեկանքների առկայությունը**, որի համար խնդրում եմ Ձեր աջակցությունը եւ **միջնորդությունը Մարզպետների աշխատակազմերից, Երեւանի քաղաքապետարանից** տեղեկությունների, այդ թվում՝ տեղեկանքների հավաքագրման եւ տրամադրման հարցում:

Տեղեկատվությունն անհրաժեշտ է տրամադրել 2018-2024 թթ. ներառյալ.

2018-2024 թվականների ընթացքում տեղի ունեցած բարեփոխումների ժամանակահատվածում Երեւան քաղաքի դպրոցների 10% եւ ՀՀ յուրաքանչյուր մարզի դպրոցների 10% հետեւյալ տվյալներն ու փաստաթղթերը՝
* Երեւան քաղաքի դպրոցների 10%-ի եւ ՀՀ յուրաքանչյուր մարզի դպրոցների 10%-ի կառավարման համակարգերի կառուցվածքը (կառավարող օղակի պաշտոնները եւ հաստիքների քանակը),
* Երեւան քաղաքի դպրոցների 10%-ի եւ ՀՀ յուրաքանչյուր մարզի դպրոցների 10%-ի բյուջեի վերաբերյալ հաշվետվությունները,
* Պետական մարմինների կողմից Երեւան քաղաքի դպրոցների 10%-ում եւ ՀՀ յուրաքանչյուր մարզի դպրոցների 10%-ում իրականացված մոնիթորինգների արդյունքներ,
* Երեւան քաղաքի դպրոցների 10%-ում եւ ՀՀ յուրաքանչյուր մարզի դպրոցների

10%-ում գործածվող կառավարչական փաստաթղթերի ցանկ, ցանկի փոփոխություններն ըստ բարեփոխումների ժամանակահատվածի:

Հարգելի՛ պարոն Խուդաթյան, ինձ համար այս վճռական փուլում Ձեր աջակցությունն էական ներդրում կունենա իմ հետազոտական աշխատանքի հաջող իրականացման գործում, որի համար կանխավ հայտնում եմ խորին շնորհակալություն:

Հարգանքով՝ Մխիթար Գասպարյան
ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի անդամ,
ԿԶՆԱԿ հիմնադրամի ուսուցիչների մասնագիտական զարգացման բաժնի մասնագետ

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիմող՝

ՄԽԻԹԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ